ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2080-Ֆ/1

ք. Երևան «30» դեկտեմբերի 2022 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Գ. Սաֆարյանի (այսուհետ պետական մարմին), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը (այսուհետ կազմակերպություն), ի դեմս նախագահ Ա. Մելիքբեկյանի և գլխավոր քարտուղար Ա. Ազարյանի, ովքեր գործում են կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29 -ի N 2080 -Ն որոշումը (այսուհետ որոշում), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է Հայաստանի Հանրապետությունում ֆուտբոլի ենթակառուցվածքների զարգացման ծրագրի իրագործման համար «Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը որպես աջակցություն տրամադրել՝ **2 500 000 000** (երկու միլիարդ հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումար, իսկ կազմակերպությունը պարտավորվում է միջոցառումն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (պարբերաբար), առանց որևէ սահմանափակումների, ուսումնասիրել կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2. որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

2.4.7. Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 6-ամսյա ժամկետում Պետական մարմին ներկայացնել Պայմանագրի 1-ին կետում նշված ծրագրի արժեքը հիմնավորող նախագծանախահաշվային փաստաթղթերը.

2.4.8. չծախսված գումարի վերջնական, տարեվերջյան մնացորդը (տնտեսումները, խնայողությունները) վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև սույն Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների (ֆինանսական և բովանդակային) ընդունմանը հաջորդող 15-րդ աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Նախարարությունը՝ սույն պայմանագրի 1.1 կետում նշված գումարը կազմակերպությանը տրամադրում է համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի -ի N -Ն որոշմամբ նախատեսված եռամսյակային համամասնություններին համապատասխան:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում կազմակերպությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 0.5 տոկոսի չափով: Տուգանքը հաշվարկվում է նաև Պայմանագիրը դրանով սահմանված ժամկետներում կատարելու, սակայն Պետական մարմնի կողմից չընդունվելու դեպքում: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

5.2. Պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումների համար պայմանագրով սահմանված ժամկետները Կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս Պետական մարմնին վճարում է տույժ՝ հանձնման ենթակա, սակայն չհանձնված աշխատանքների արժեքի 0.05 (հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.3. Պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում Կազմակերպությունը Պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.15 (տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

5.4. Պետական մարմինը 5.1., 5.2. և 5.3. կետերով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է կազմակերպությանը վճարվելիք (վճարված) գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2024թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև Պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը, սակայն ոչ ուշ, քան 2024 թվականի դեկտեմբերի 4-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, նախարարությունների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

8.2. Պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին	Կազմակերպություն
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն N 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011037877 ՀՎՀՀ 02698732	«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ ք. Երևան, Խանջյան 27 «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570059720290600 ՀՎՀՀ 02566915
Գլխավոր քարտուղար՝ Գ. Սահակյան (ստորագրություն)	Նախագահ՝ Ա. Մելիքբեկյան (ստորագրություն)
Կ.Տ	Գլխավոր քարտուղար՝ Ա. Ազարյան (ստորագրություն) Կ.Տ

Հավելված
2022 թ. դեկտեմբերի 30 -ին
կնքված N 2080-Ն/1 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	Օժանդակություն «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ-ին	Աջակցություն Երևան քաղաքում ֆուտբոլի դպրոցի կառուցման ծրագրին	Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը կազմակերպվում է «Գնումների մասին» օրենքով սահմանված կարգով	- Թվով 4 ֆուտբոլի դպրոցի կառուցման համար անհրաժեշտ պարզ քաղաքաշինական փորձաքննության, իսկ անհրաժեշտության դեպքում նաև պետական համալիր փորձաքննության դրական եզրակացություն ստացած նախագծանախահաշվ	01.09.2024թ.	800 000 000
2		Աջակցություն ՀՀ Արարատի մարզում ֆուտբոլի դպրոցի կառուցման ծրագրին				400 000 000
3		Աջակցություն ՀՀ Գեղարքունիքի մարզում ֆուտբոլի դպրոցի կառուցման ծրագրին				600 000 000

4		Աջակցություն ՀՀ Տավուշի մարզում ֆուտբոլի դպրոցի կառուցման ծրագրին		ային փաստաթղթեր: - Թվով 4 ֆուտբոլի դպրոցի կառուցման մեկնարկ		700 000 000
		Ընդամենը՝				**2 500 000 000**

Պետական մարմին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3,
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011037877
ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Գ. Սահակյան
(ստորագրություն)

Կ.Տ

Կազմակերպություն

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ
ք. Երևան, Խանջյան 27
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570059720290600

ՀՎՀՀ 02566915

Նախագահ՝

Ա. Մելիքբեկյան
(ստորագրություն)

Գլխավոր քարտուղար՝

Ա. Ազարյան
(ստորագրություն)

Կ.Տ